

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՓՈԽՃԱՆԱԶՄԱՆ և
ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ



« 21 » փետրվար 2007 թ.

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2006 թ.

ք. Երևան


Հետ նայելով ԱՓՇԱՏԿ-ի 2006 անդրանիկ տարվա գործունեությանը՝ ուզում եմ ուրախությամբ նշել կատարված աշխատանքների հաջողության մասին: ԱՓՇԱՏԿ-ը, լինելով Լիսաբոնի կոնվենցիայի ներդրման գործիքը ազգային մակարդակում, մշակել է իր զարգացման հիմնական միտումները, ըստ երկրում ընթացող կրթական բարեփոխումների, պահպանելով միջազգային պահանջները:

Կարճ ժամանակահատվածում գրասենյակը համալրվեց երիտասարդ մասնագետներով, որոնք աշխատեցին մեծ հետաքրքրությամբ և նվիրումով, ձեռք բերելով ոլորտի անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ՝ թե՛ աշխատանքի, թե՛ վերապատրաստումների և թե՛ միջազգային սեմինարների մասնակցության ընթացքում:

Բոլոնիայի գործընթացի խթանումը, իրոք, դարձել է մեր կազմակերպության հիմնական մտահոգություններից մեկը: 2006 թվ.-ին ԱՓՇԱՏԿ-ը անդամակցել է Բոլոնիայի հետամուտ խմբին և մասնակցել մի շարք Բոլոնիայի պաշտոնական հանդիպումներին, ինչպես նաև Կրթության և գիտության նախարարության կողմից կազմավորված աշխատանքային խմբում մասնակցել է Ազգային զեկույցի պատրաստմանը:

Բոլոր վերը նշված գործողությունները նպաստել են ճանաչման գործընթացի և, մասնավորապես, ԱՓՇԱՏԿ-ի՝ որպես պետության կողմից միակ յիագործված ճանաչման մարմնի մասին տեղեկացվածության բարձրացմանը շահառուների շրջանակում:

Անկասկած, ԱՓՇԱՏԿ-ի գործունեության հետագա տարիները նույնպես կլինեն «ինքնահայտնագործման» տարիներ: Ձեր ուշադրությանն եմ ներկայացնում հաշվետվությունը և ցանկանում բարի ընթերցում:



Գայանե Հարությունյան
Գործադիր տնօրեն

Ճանաչումը

Բոլոնիայի

գործընթացի սիրտն է

*«...Եվրոպական ընդհանուր կրթական տարածք ստեղծելու հաջողության անհրաժեշտ նախադրյալն ենք է Բոլոնիայի գործընթացին միացած որևէ երկրում ստացած որակավորման ճանաչումը Բոլոնիայի մյուս բոլոր երկրների կողմից»:*¹

Բոլոնիայի գործընթացի նպատակները ուղղակիորեն և ակնհայտորեն կապված են ճանաչման հետ, հատկապես դասընթացների և համալսարանի կրթական աստիճանների, ինչպես նաև եռատիճան կրթական համակարգի ներդրման, շարժունության, որակի ապահովման ոլորտում եվրոպական համագործակցության և բարձրագույն կրթության մեջ եվրոպական ուղղվածության խթանման և շարունակական կրթության հետ: Առանց արդյունավետ ճանաչման գործընթացների հնարավոր չի լինի իրականացնել վերը նշված նպատակները և խթանել եվրոպական բարձրագույն կրթական համակարգի զրավչությունը:

Ճանաչումը բազմակողմանի գործընթաց է: Բուհերի համար կարևոր է, որ իրենց հաստատությունը ճանաչված լինի և՛ ազգային, և՛ միջազգային մակարդակում: Ուսումնական ծրագրերի ճանաչումը մի այլ ուղղվածություն է, որը բոլորովին չի նմանորում, որ հավատարմագրված բուհի կողմից շնորհված բոլոր որակավորումները ճանաչվում են ազգային և միջազգային մակարդակում: Անհատի որակավորման լրիվ կամ մասնակի ճանաչումը և մերժումը՝ կրթությունը շարունակելու կամ աշխատանքի դիմելու նպատակով, ճանաչման կարևորագույն ուղղվածությունն է:

Ճանաչման գործընթացի համար կարևոր է ENIC և NARIC ցանցերի փոխհամագործակցությունը, կապը որակի ապահովման գործակալությունների և այնպիսի բաղադրիչների հետ, ինչպիսիք են՝ տրանսազգային կրթությունը, ուսումնական արդյունքները, միացյալ աստիճանները, հին/նոր կրթական աստիճանները, գործող օրենսդրական դաշտը, շարունակական կրթությունը և թափանցելիություն ապահովող այլ գործիքները:

Նայեստանը 2004թ. դեկտեմբերին վավերացրել է Լիսաբոնի կոնվենցիան: Սակայն, միջազգային փորձը վկայում է, որ դա բավարար չէ, եթե կոնվենցիայի կիմնական դրույթները չեն վերարտադրվել ազգային օրենսդրության մեջ կամ միջազգային փորձում: Անհրաժեշտ է օգտագործել գոյություն ունեցող ճանաչման գործիքների ամբողջ բազմազանությունը՝ իրավական և գործնական, որակի ապահովման ազգային համակարգը, ինչպես նաև որակավորումների ազգային համակարգը՝ ապահովելու «արդար» և «թափանցիկ» գործընթաց: Բայց, նույնիսկ, թվարկված բաղադրիչների ամբողջական ներդրման պայմաններում, ավտոմատ ճանաչումը հնարավոր կլինի միայն սահմանափակ դեպքերում:

¹ Բեռլինի կոմյունիկեի www.bologna-berlin2003.de

**ԱՓՇԱՏԿ-ի
հիմնական
գործառնություններն են՝
1.Տրամադրել
տեղեկատվություն,
խորհրդատվություն
կամ ֆորմալ որոշում
օտարերկրյա
դիպլոմների,
աստիճանների և այլ
որակավորումների
ճանաչման
վերաբերյալ**


1.1 Օտարերկրյա որակավորումների ճանաչման համար ԱՓՇԱՏԿ-ը մշակել է միջազգային չափանիշներին համապատասխան տեղեկատվական փաթեթ, որը բաղկացած է դիմումնագրից, այն լրացնելու ցուցմունքներից, և տեղեկատվական գրքույկից: Փաթեթի նպատակն է դիմողներին տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն որակավորումների ճանաչման ընթացակարգի և ժամկետների վերաբերյալ (տե՛ս Հավելված 1): Համապատասխանաբար, մշակվել են նաև ճանաչման և խորհրդատվական տեղեկանքի օրինակելի ձևեր:

1.2 Որակավորումների ճանաչումը ենթադրում է օտարերկրյա որակավորման համադրելիությունը ՀՀ նմանատիպ որակավորման հետ՝ փոխադրելով այն ՀՀ որակավորումների ազգային համակարգ: ԱՓՇԱՏԿ-ը իրականացնում է որակավորումների թե՛ մասնագիտական, թե՛ ակադեմիական ճանաչում՝ տրամադրելով համապատասխան փաստաթուղթ (տե՛ս Հավելված 2):

1.3 ՀՀ բուհերի շրջանավարտները արտասահմանում կրթությունը շարունակելիս կամ աշխատանքի դիմելիս հանդիպում են իրենց որակավորումների ճանաչման հետ կապված բարդությունների, որը պայմանավորված է կրթական համակարգերի առանձնահատկություններով: Այս պարագայում ԱՓՇԱՏԿ-ը հանդես է գալիս որպես խորհրդատու մարմին, և տրամադրում է խորհրդատվական տեղեկանք որակավորումը կրողին (տե՛ս Հավելված 3):

1.4 2006թ. ընթացքում ԱՓՇԱՏԿ-ը՝ որպես որոշում կայացնող և խորհրդատվություն տրամադրող մարմին, իրականացրել է 259 գործ (տե՛ս պատկեր 1): Իրականացվել է նաև վիճակագրական վերլուծություն (տե՛ս պատկեր 2,3,4,5,6,7) ըստ դիմորդների քաղաքացիության, ձեռք բերած մասնագիտության, դիմումնագրի նպատակի, որակավորումը շնորհած կրթական հաստատությունների և հարցումն իրականացրած երկրների:

1. 2006թ. ընթացքում ԱՓՇԱՏԿ-ի կողմից իրականացրած գործերը




- 1 Ռրակավորման ճանաչում
- 2 Խորհրդատվական տեղեկանքի սրամադրում
- 3 Խորհրդատվական տեղեկանքի սրամադրում կրթական հաստատություններում
- 4 Ռրակավորման իսկու թյան հաստատում
- 5 Ավարտական վկայականների իսկու թյան հաստատում


2. Ռրակավորման ճանաչումն ըստ նպատակի



3. Ռրակավորման ճանաչման դիմորդների քաղաքացիու թյունը




4. Որակավորման ճանաչումն ըստ մասնագիտությունների



- Բիզնես կառավարում
- Միջազգային իրավունք և տնտեսագիտություն
- Քիմիա
- Բուժական գործ
- Կառավարում և առողջիտ, տնտ.գործունեության ապահովում
- Տնտեսագիտություն և գյուղատնտեսության կազմակերպում
- Իրավագիտություն
- Միջազգային հարաբերություններ
- Երաժշտական կրթություն, վսկալ
- Կանոնադրական կառավարում
- Տնտեսագիտություն
- Ճնշակագրություն
- Ֆիզիկական և սպորտ
- Աստվածաբանություն


Պատկեր 4-ից ակնհայտ էրևում է, որ նշված մասնագիտությունների շարքում մեծ թիվ են կազմում իրավագիտություն և բուժական գործ մասնագիտությունները, որոնք դասվում են կարգավորվող մասնագիտությունների շարքին, սակայն ՀՀ-ում գոյություն չունի համապատասխան օրենսդրական դաշտ կարգավորվող մասնագիտությունների վերաբերյալ, որը լուրջ խոչընդոտներ է առաջ բերում որակավորումների ճանաչման գործընթացում:

5. Խորհրդատվական տեղեկանքների տրամադրումն ըստ նպատակի



- Ռատուր շարունակելու
- Նշված
- Աշխատանքի դիմելու

6. Որակավորումների իսկության հաստատում ըստ շնորհած հաստատությունների



- Բուհական որակավորումներ
- Միջին մասնագիտական որակավորումներ
- Միջնակարգ կրթության որակավորումներ

7. Կատարված հարցումներն ըստ երկրների



- Հայաստան
- Ամերիկա
- Հունաստան
- Միքիա
- Ռուսաստան
- Այլ՝ Լեհաստան, Արդեյանդներ, Իրան, Կանադա, Քուվեյթ, Լիբանան, Անգլիա, Շվեյցարիա, Ռեյրաինա, Շվեյիա, Կիպրոս, Լիտվա, Ֆրանսիա, Կրաստան, Գերմանիա և այլն

Կեղծ

որակավորումներ,

խախտումներ

1.5 ԱՓՇԱՏԿ-ն իր գործունեության ընթացքում հանդիպել է տարբեր օրինախախտումների և կեղծիքների, որոնք խաթարում են վստահությունը ՀՀ բուհական համակարգի նկատմամբ: Եթե խմբավորենք այդ դեպքերը, ապա դրանք են ակադեմիական տեղեկանքների թերի լինելը, բուհի հավատարմագրերի կամ այլ փաստաթղթերի անորակ և նոտարի կողմից չհաստատված թարգմանությունները և տարբեր տեսակի կեղծիքները: Օրինակ, կարելի է նշել մի քանի դեպք:

Եվրասիա միջազգային համալսարանի կողմից Հոլանդիա են ներկայացվել հավատարմագրման վկայականներ, որոնք բուհի աշխատակիցներից մեկի կողմից թարգմանվել էին անգլերեն և համակարգչի միջոցով տեղադրվել անմիջապես պետական հավատարմագրի պատճենի վրա: Թարգմանություններում առկա էին բազմաթիվ սխալներ: Հոլանդիայի ԷՆԻԿ-ը անմիջապես արձանագրել էր դեպքը և տեղեկացրել ԱՓՇԱՏԿ-ին, որ պետական հավատարմագրերի վկայականների վրա անգլերեն տարբերակում գոյություն ունեն բազմաթիվ սխալներ, որոնք չեն ներշնչում վստահություն բուհի շնորհած որակավորումների և կրթության որակի հանդեպ: Անշուշտ, ԱՓՇԱՏԿ-ի կողմից անմիջապես պարզաբանվել է, որ ներկայացված պատճենները չեն համապատասխանում պետական հավատարմագրերի վկայականների ձևաթղթերին:

Այսօր արդիական է դարձել շարժունության ծրագրերի շրջանակներում միջբուհական համագործակցությունն ու ուսանողների փոխանակումը, և բուհերը իրենց վերաբերյալ սպառիչ տեղեկատվություն ներկայացնելու նպատակով մի շարք այլ փաստաթղթերի հետ մեկտեղ տրամադրում են նաև պետական հավատարմագրերի վկայականների պատճենները՝ թարգմանելով դրանք անգլերեն կամ այլ եվրոպական լեզուներով: Վերոնշյալ դեպքերից խուսափելու համար, ԱՓՇԱՏԿ-ը պատրաստել է առաջարկություն, որ հավատարմագրման ծառայությունը տրամադրի երկլեզու փաստաթուղթ, եվրոպական ընդունված չափանիշների համապատասխան:

Մի այլ հատականշական օրինակ է մասնավոր բուհերի կամայականությունները: Կիրառական բիոտեխնոլոգիայի ինստիտուտի կողմից Միրիայի քաղաքացուն շնորհվել էր ոչ պետական նմուշի դիպլոմ՝ հավատարմագրված մասնագիտությամբ, քանի որ Միրիայի քաղաքացին հնարավորություն չէր ունեցել մասնակցել պետական քննություններին:

Այսպիսի դեպքերում ԱՓՇԱՏԿ-ը չի կարող գտնել բուհի գործողությունները պարզաբանելու իրավական հիմքերը:

2. Տրամադրել տեղեկատվություն Հայաստանի և այլ երկրների կրթական համակարգերի վերաբերյալ

2.1 ԱՓՇԱՏԿ-ը իրականացրել է ՀՀ բուհական համակարգի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, որը կգետեղվի այսօր իր մշակման ավարտական փուլում գտնվող ինտերնետային կայքում (www.armenic.am) (տե՛ս հավելված 4) : Կայքում պարբերաբար կթարմացվի ՀՀ –ում գործող թե՛ պետական, թե՛ ոչ պետական բուհերի տվյալների բազան, օրենսդրական փոփոխությունները, երկրում ընթացող կրթական բարեփոխումների վիճակը:

2.2 Հանդիսանալով միջազգային ENIC/NARIC ցանցի լիիրավ անդամ, ԱՓՇԱՏԿ-ը հնարավորություն է ստացել իրականացնել որակավորումների վերաբերյալ տեղեկատվության փոխանակում, որի միջոցով ամենօրյա տեղեկատվություն է ստացել արտասահմանում ձեռքբերված որակավորումների վերաբերյալ, ծանոթացել է այլ երկրներում նմանատիպ որակավորման ճանաչման վերաբերյալ փորձառություններին:

2.3 ԱՓՇԱՏԿ-ը պատրաստել է կազմակերպության վերաբերյալ տեղեկատվական գրքույկ , որը գտնվում է տպագրման փուլում (տե՛ս հավելված 5):

3. Տրամադրել տեղեկատվություն շարժունության ծրագրերի վերաբերյալ


3.1 2006 –ի ընթացքում միջազգային հանդիպումների ժամանակ ԱՓՇԱՏԿ-ը քայլեր է ձեռնարկել Հայաստանում շարժունությունը խթանելու համար: Վատիկանում կայացած Բոլոնիայի պաշտոնական կոնֆերանսի ժամանակ նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել Տոմաս Բատայի համալսարանի ռեկտորի հետ ուսանողների փոխանակման ծրագրերի վերաբերյալ: Արդյունքում սկսվեցին

ստորագրվել են պաշտոնական պայամանագրեր ՀՀ հինգ բուհի հետ (տե՛ս հավելված 6):

3.2 Նախնական բանակցություններ են տարվել Համաեվրոպական ուսանողների ասոցիացիայի հետ Հայաստանում միջազգային կոնֆերանս կազմակերպելու նպատակով:

3.3 ԷՆԻԿ/ՆԱՐԻԿ ամենամյա հանդիպման ժամանակ կապեր են հաստատվել Միջազգային Բակալավրիատ կազմակերպության (IBO) հետ, որի ներկայացուցիչը 2007-ի փետրվարին այցելեց Հայաստան՝ բանակցելու IBO դպրոցներ հիմնադրելու վերաբերյալ:

3.4 ԱՓՇԱՏԿ-ի կայքում նախատեսվում է գետեղել անընդհատ թարմացվող տեղեկատվություն Հայաստանում գործող փոխանակման ծրագրերի, ինչպես նաև Եվրոպական շարժունության ծրագրերի վերաբերյալ (ERASMUS-MUNDUS, LEONARDO DA VINCI, SOCRATES):



ԱՓՇԱՏԿ-ի պատասխանատվությունների մի մեծ մասն է կազմում Բոլոնիայի գործընթացի խթանումը Հայաստանում: Այդ ուղղությամբ կատարվել են մի շարք աշխատանքներ.

4.1 Պատրաստվել է «Բոլոնիայի գործընթացի սկզբունքների ՀՀ-ում ներդրման նախագիծը», «Առաջարկվող բայերը», «Դոկտորական (գիտաեկտագոտական) ուսուցման եվրոպականացումը» փաստաթղթերը, որոնք ներկայացվել են ԿԳ նախարարությանը, ինչպես նաև պետական և մասնավոր բուհերի ղեկավարներին,

4.2 մշակվել է Դիպլոմի հավելվածի ազգային տարբերակը (տե՛ս հավելված 7), մասնավորապես պատրաստելով ՀՀ կրթական համակարգի միասնական նկարագիրը, որը գտնվում է քննարկման փուլում,

4.3 ներկայացնում է Հայաստանը Բոլոնիայի գործընթացին հետամուտ միջազգային խմբում:

4.4 մասնակցում է ԿԳ նախարարության կողմից ստեղծված աշխատանքային խմբերում,

4.5 մասնակցել է Ազգային հաշվետվության և Եվրոպական վիճակագրական ծառայության հարցաշարերի պատրաստմանը,

4.6 մշակել է կրթական համակարգի դիագրամը EURYDICE վիճակագրական կենտրոնի համար (տե՛ս հավելված 8):

4.7 պատրաստել է Ճանաչման գործողությունների ազգային ծրագիրը (անգլերեն և հայերեն) , որը ներկայացվել է Բոլոնիայի քարտողարություն (տե՛ս հավելված 9),

4.8 ներկայացրել է ՀՀ կրթական համակարգի բարեփոխումների իրավիճակը մի շարք Բոլոնիայի պաշտոնական սեմինարներում: